

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h/h	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Կարգավիճակ	Առաջարկության բովանդակությունը	Կցված փաստաթղթեր	Եզրակացություն	Դրույթ
	1	2	3	4	5	6
1	Arsen Hayriyan 04.01.2026 13:13:40	Չի ընդունվել	Ներկայումս որոշակի անորոշություն է առաջանում արտադրության լիցենզիայի շրջանակներում նախատեսված իրավունքների մասով: «Էներգետիկայի մասին»		«Էներգետիկայի մասին» օրենքը չի սահմանափակում հիբրիդային կայանների կառուցումն ու շահագործումը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ	

		<p>օրենքը (Հոդված 35) սահմանում է, որ արտադրության լիցենզիա ունեցող անձը իրավունք ունի կառուցելու (վերակառուցելու) արտադրող կայան, ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայան: Սակայն օրենքում հստակեցված չէ, թե արդյոք այդ իրավունքի շրջանակում ներառվում են նաև հիբրիդային (արտադրություն + պահեստավորում) կայանները: Ինչպես էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանների դեպքում օրենքում արված է հստակ իրավական սահմանում և անդրադարձ,</p>		<p>Հայաստանում վերականգնվող էներգիայի զարգացման նախնական փուլերում (2004–2008 թթ.) տարբեր երաշխավորված սակագներ և էլեկտրաէներգիայի գնումների երաշխավորման ժամկետներ են սահմանվել տարբեր տեսակի վերականգնվող էներգիայի աղբյուրների համար (օրինակ՝ արևային, քամային), ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իր իրավական ակտերով</p>	
--	--	--	--	--	--

			<p>առաջարկվում է նույն մոտեցմամբ հստակեցնել նաև հիբրիդային կայանների կարգավորումը՝</p> <ul style="list-style-type: none"> – Նախատեսելով, որ արտադրողը իրավունք ունի կառուցել (վերակառուցել) նաև հիբրիդային կայան, որը ներառում է արտադրության և պահեստավորման հզորություններ: – Նախատեսելով, որ հիբրիդային կայանները կարող են մատուցել նաև պահեստավորման ծառայություն: – Սահմանել «Հիբրիդային կայան» հասկացությունը որպես վերականգնվող էներգիայի աղբյուր 		<p>դասակարգել է էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիաները ըստ աղբյուրի՝ բացառապես համապատասխան սակագներ և երաշխիքներ կիրառելու նպատակով: Այս պրակտիկան շարունակվում է մինչև օրս, այդ թվում՝ մրցակցային էլեկտրակայանների դեպքում (չնայած որ վերականգնվող էներգիայի աղբյուրի տեսակը նրանց համար էական դեր չի խաղում, քանի որ նրանք իրավունք չունեն ո՛չ էլեկտրաէներգիայի</p>	
--	--	--	--	--	--	--

		<p>օգտագործող կայան, որը ներառում է</p> <p>արտադրության և պահեստավորման հզորություններ կամ օրինակ՝ «Հիբրիդային կայանը» կամ «Հիբրիդացումը» կարող են ներառել նոր արտադրական միավորների ավելացում գործող վերականգնվող էներգիայի աղբյուր օգտագործող կայանին և/կամ մարտկոցային էներգիայի պահպանման համակարգերի ավելացում՝ առանց փոխելու գործող արտադրական կայանի ներմուծման (injection capacity) հզորությունը:</p> <p>- Սահմանել «Պահեստավորման ծառայություն»</p>		<p>գնման երաշխիքի, ո՛չ էլ կարգավորվող սակագնի), հավանաբար այն պատճառով, որ ներդրողները դեռևս հետաքրքրություն չեն ցուցաբերել հիբրիդային կայանների կառուցման նկատմամբ: Էներգիայի պահեստավորման առնչությամբ կարևոր է տարբերակել՝</p> <p>* պահեստավորման ծառայությունը, որը մատուցվում է համակարգի օպերատորին կամ շուկայի մասնակիցներին, և</p> <p>* պահեստավորումը</p>	
--	--	---	--	--	--

			<p>հասկացությունը այնպես, որ վերջինս թույլ տա հիբրիդային կայաններին մատուցել հաշվեկշռման ծառայություններ՝ շուկայում այլ ծառայություններ մատուցելու հետ մեկտեղ:</p>		<p>սեփական կարիքների համար: Եթե էներգիայի պահպանման ծառայությունը մատուցվում է որևէ սուբյեկտի կողմից համակարգի օպերատորին կամ շուկայի մասնակիցներին, ապա որպես անկախ գործունեության տեսակ պահանջվում է առանձին լիցենզիա, և արտադրողն էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի շրջանակում այս գործունեությամբ զբաղվել չի կարող: Իսկ եթե էներգիայի</p>
--	--	--	--	--	--

					<p>պահեստավորումն իրականացվում է էլեկտրաէներգիա արտադրողի սեփական կարիքների համար, այդ թվում՝ շուկայում պայմանագրային պարտավորությունները կատարելու նպատակով, ապա առաջարկվող նախագծի համաձայն առանձին լիցենզիա չի պահանջվի, անկախ նրանից՝ այն տեղակայված է նույն վայրում՝ էլեկտրակայանի հետ (որը կարելի է անվանել հիբրիդային) կամ ֆիզիկապես առանձին,</p>	
--	--	--	--	--	--	--

					հեռավորության վրա գտնվող օբյեկտում:	
--	--	--	--	--	---	--